Գևորգ Էմին

Մենք

Մենք փո՛քր ենք, այո՛,
Փո՛քր, -
Լեռների ծերպից սուրացող այն քարի՛ նման,
Որ դաշտում ընկած ժայռի ո՛ւժն ունի.

Փո՛քր,
Լեռնային մեր գետերի պես,
Որոնք վիթխարի ո՛ւժ են ամբարել,
Անծանո՛թ՝
Հովտի ծո՛ւյլ-ծո՛ւյլ գետերին:

Մենք փո՛քր ենք, այո՛,
Ձեզ ո՛վ էր ասում
Մեզ սեղմե՛ք այնքան,
Որ մենք ստիպված... ադամա՛նդ դառնանք.

Ո՞վ էր ստիպում՝
Մեզ աստղերի պես ցիր ու ցա՛ն անեք,
Որ միշտ մե՛զ տեսնեք՝
Ո՛ւր էլ որ գնաք...

Մենք փո՛քր ենք,
Սակայն մեր երկրի՛ նման,

Որի սահմանը
Բյուրականի՛ց մինչ Լուսի՛ն է հասնում,
Եվ Լուսավանի՛ց մինչև Ուրարտո՛ւ...

Փո՛քր,
Այն հրա՜շք ուրանի նման,
Որ դար ու դարեր
Փայլո՜ւմ է,
Շողո՜ւմ,
Սակայն չի՜ հատնում...